Արձանագրություն

ՀՀ Շիրակի մարզի Շիրակ-9, Շիրակ-10, Շիրակ-11 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքների նախնական փուլի հանրային 1-ին լսման
(ՇՄԱԳ հաշվետվության նախնական գնահատման հայտ)

Պատվիրատու՝
Քաղաքաշինության կոմիտե

Կատարող՝
«Հայնախագիծ» ԲԲԸ

ՀՀ Շիրակի մարզ. ք. Արթիկ

13.06.2022 թ

Քննարկմանը մասնակցում էին.

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ա. Սուքիասյանը,
Գյուղատնտեսության բաժնի պետ՝ Ա.Պասկևիչյանը,

Համայնքի ներկայացուցիչներ, վարչական ղեկավարներ, բնակիչներ:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ՝ Ն.Պետրոսյանը,
Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ՝ Հ.Դավթյանը,

Նախագծի հեղինակային խումբ՝ Լ.Բաբայան
Շ.Պետրոսյան
Ա.Հակոբ-Նաիրյան
Ա.Ումուրշատյան
Ա.Սարոյան

Բացման խոսքով հանդես եկավ Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ա.Սուքիասյանը, ով ներկայացրեց, որ կառավարության պատվիրակմամբ և քաղաքաշինության կոմիտեի համակարգմամբ ներկայումս մշակման ընթացքում են Շիրակի մարզի Արթիկ համայնքի բնակավայրերը ներառող միկրոռեգիոնների համակցված քաղաքաշինական փաստաթղթերի մշակման աշխատանքները: Այդ կապակցությամբ կազմակերպված հանրային լսման շրջանակում խոսքը փոխանցելով քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցչին՝ առաջարկվեց առավել հանգամանալից ներկայացնել ընթացիկ աշխատանքների բնույթը:

Քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցչի կողմից ընդհանուր գծերով ներկայացվեց նախագծի հիմնադրույթների վերաբերյալ քննարկման անհրաժեշտությունը՝ պայմանավորված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և քաղաքաշինության մասին ՀՀ օրենքների պահանջներով՝ մարդու

կենսագործունեության ցանկացած փոփոխություն փորձաքննության ենթակա լինելու պահանջով:

Ներածական խոսքում ներկայացվեց նախագծի օրենսդրական հենքը կազմող քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերը՝ պարզաբանելու տվյալ նախագծի շրջանակում լուծվող խնդիրները բնույթը:

Ներկայացվեց, որ նախագիծն իր մեջ ներառում է տարածական պլանավորման երեք մակարդակ՝ տարածքային հատակագծման մասով, որի շրջանակում լուծում է տրվում ողջ միկրոռեգիոնի զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքային, ռեսուրսային պոտենցիալի համատեղ օգտագործման, միկրոռեգիոնային օբյեկտների տեղաբաշխման մասով, այնուհետև գլխավոր հատակագծի մասով, որի շրջանակում միկրոռեգիոնում ներառված յուրաքանչյուր բնակավայրի համար դիտարկվում և համալիր գնահատման արդյունքում կանխորոշվում են զարգացման հիմնական ուղղությունները և դրանց համար անհրաժեշտ տարածքային ընդգրկումները, գործառնական գոտիները և դրանց միջև առավել արդյունավետ գործառնական հատակագծային կապերը, հանրային տարածքների համակարգը: Իսկ գոտևորման մասով տրված նախանշումների համար առաջադրվում են տարածքների օգտագործման հարաբերակցությունը, նախատեսվող կառուցապատումների տեղադիրքին, հարկայնությանը, օգտագործվող շինանյութերին ներկայցվող չափորոշիչների համակարգը:

Պարզաբնումներ տրվեցին հատակագծային սահմանափակումների և հեռանկարային նախանշումների հիման վրա տարածահատակագծային կազմակերպման առանձնահատկությունները՝ ապահովելու մարդու կենսագործունեության համար առավել հարմարավետ, առողջ, անարգել ու գրավիչ միջավայր:

Խոսքը փոխանցվեց հեղինակային խմբի ներկայացուցչին: Վերջինս ներկայացրեց արդեն իսկ կատարված աշխատանքը, դրա համար հիմք հանդիսացող ելակետային տվյալների տրամադրման գործընթացը, ինժեներաերկրաբանական հետազոտությունների անցկացման անհրաժեշտությունը, կադաստրային քարտեզագրման հենքի վրա ձևավորված հենակետային հիմքի կազմման աշխատանքները, հատակագծային սահմանափակումների առանձնացման խնդիրները և գործընթացի այլ կետերը:

Առաջարկվեց ներկայացված պահանջների հաշվի առնմամբ, ինչպես նաև ներկայացված նորմատիվ իրավական կարգերի պահանջները հաշվի առնելով առաջիկա օրերին նախագծողներին ներկայացնել բնակավայրի զարգացման իրենց պատկերացումները՝ նախագծողներին ուղղորդելու առավել արդյունավետ միջավայրի ստեղծման:

Վարչական ղեկավարներին հուզող հարցերից առավել հատկանշական էին կադաստրային քարտեզագրման սխալների հետ կապված խնդիրները, որին ի պատասխան արձագանք եղավ, որ կադաստրի կոմիտեի կողմից առաջիկայում նախատեսվում են նման ճշգրտումներ, իսկ անհետաձգելի դեպքերում՝ առանձին փաթեթի միջոցով անհրաժեշտ է գրավոր դիմել սխալների ուղղման հանձնաժողովին:

Մասնակիցների կողմից տրվեցին հարցադրումներ՝ նախագծման ընթացքում կամ դրանից հետո նոր ներդրումային կարիքներով պայմանավորված հողատեսքերին վերագրվող նոր պահանջների վերաբերյալ:

Պատասխան տրվեց, որ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը դինամիկ փաստաթղթեր են և բնակավայրերի ու բնակչության զարգացմանը խթանող նոր առաջացող ցանկացած առաջարկ ունի կենսունակ լինելու հնարավորություն:

Եզրափակելով խոսքը՝ կարևորվեց բնակավայրի հետագա քաղաքաշինական կանոնակարգված գործունեության մեջ գլխավոր հատակագծի մշակման կարևորությունը և առաջարկվեց համատեղ աշխատանքի միջոցով առավել արդյունավետ լուծումների մշակում:

Զեկուցող

Քննարկման պատասխանատու՝

ՀՀ Արթիկի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար Ա. Սուքիասյան

ՀՀ Արթիկի համայնքապետարանի
քարտուղարության ենթակազմի կառավարման
և տեղեկատվական տեխնոլոգիաների
բաժնի առաջատար մասնագետ Տ.Չարչյան

Արձանագրող՝ Շ. Պետրոսյան

ՑՈՒՑԱԿ

22 Շիրակի մարզի Շիրակ-9, Շիրակ-10, Շիրակ-11 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծային աշխատանքների նախնական փուլի (1-ին լսում) հանրային քննարկման մասնակիցների

ք.Արթիկ 13.06.2022 թ .

NN	Անուն, Ազգանուն	Պաշտոն, բնակավայր	Կոնտակտային տվյալներ (հեռախոսահամար, էլ-հասցե)	Ստորագրություն
1	[illegible]	[illegible]	077 772 102	
2	[illegible]	[illegible]	093 42 36 66	
3	[illegible]	[illegible]	098 56 56 06	
4	[illegible]	[illegible]	093-12-30-10	
5	[illegible]	[illegible]	094 67 27 63	
6	[illegible]	[illegible]	094 30 32 38	
7	[illegible]	[illegible]	077 76 10 40	
8	[illegible]	[illegible]	094-23-50-80	
9	[illegible]	[illegible]	094-60-80-97	
10	[illegible]	[illegible]	053 74 72 25	
11	[illegible]	[illegible]	022 222 377	
12	[illegible]	[illegible]	093 44 44 32 [illegible]	
13	[illegible]	[illegible]	094 00 77 44	

14	[illegible]	[illegible]	077256611	
15	[illegible]	[illegible]	093-63-70-20	
16	[illegible]	«[illegible]» ՀՀԿ [illegible]	091-72-88-71	
17	[illegible]	«[illegible]» ՀՀԿ [illegible]	043-60-40-26	
18	[illegible]	[illegible]	093-33-60-29	
19	[illegible]	[illegible]	098-92-47-06	
20	[illegible]	[illegible]	055333886	
21	[illegible]	[illegible]	094821603	
22	[illegible]	[illegible]	094-32-75-69	
23	[illegible]	[illegible]	093-26-37-59	
24	[illegible]	[illegible]	093 39 72 48	
26	[illegible]	[illegible]	055 01 33 00	
27	[illegible]	[illegible]	077 87 37 81	
28	[illegible]	[illegible]	077 95 90 14	
29	[illegible]	[illegible]	093 25 32 46	
30	[illegible]	[illegible]	098-09-12-69	
31	[illegible]	[illegible]	093.60.32.20	
32	[illegible]	[illegible]	077.12.62 32	
33	[illegible]	[illegible]	093-25-54-71	
34				
35				